

ԹԱԹԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՑ ՄՆԱՑԱԾ ԵՐԳԵՐ
(1475—1778)

Ջենովական գաղութային իշխանության տառապանքից հետո, թաթարների վասալական խանության օրով, խոշոր փոփոխությունների ենթարկվեց և հայ հասարակության կյանքի ձևը. փոխվեց նրա քաղաքական և տնտեսական դրությունը, անկման մեջ ընկավ և հայ մշակույթը։ Ղրիմում մնացին շատ քիչ հայեր. նրանց քանակը 1778 թվի դադարի ժամանակ չէր հասնում և քսան հազարի։ Սակայն հայերի այդ փոքրիկ քանակն էլ Ղրիմի պատմության թաթարական շրջանում ունի իր ծանրակշիռ նշանակությունը։ Ինչպես տեսանք արդեն, XVII դարում քրիստոնյաների, գլխավորապես հայերի ջանքով կենդանություն ստացան վաղուց մեռած առևտուրն ու արդյունաբերությունը, որոնք անհրաժեշտ էին պետության գոյությունը պահպանելու համար։ Նախկին Կաֆան իր նոր Քեֆե անունով, նորից դարձավ Ղրիմի ներքին և արտաքին առևտրի կենտրոնը, խոր քնից դարձեցրեց ամրոց բերդի տնտեսությունը, նա դարձավ դարձավ հայոց մշակույթի, մտավոր կյանքի կենտրոնը։

Մարտիրոս դրիշը այսպես է նկարագրում Կաֆան.

«Քաֆա քաղաքը նման դրախտի,
«Ի Երուսաղիմ սուրբ քաղաքի,
«Մեծ Հռոմայ, 'ւ Ըստամբուլի,
«Շամա, Մսրա 'ւ Եգիպտոսի»¹։

XVIII դարի վերջերին մի տաղերգու գրում է.

«Քեֆե, դասին, մեծ քաղաք է,
Թաթարվորաց հաստադած է.
Քսանուշորս եգեղեցի է,

¹ Պրոֆ. Աշաւ Արտանյան, *Խաչատուր երեց Կաֆայեցու տարեգրությունը*, «Էջմիածին» ամսագիր, 1944, № 1, էջ 39—51.

Քարերն ամեն սրբադաշ է.
Քեֆե քաղաք ծովահայաց,
Եգեղեցիքն զարթարած²։

Նույն Քեֆեի մասին ժողովրդական երգը ասում է.

Քեֆե քաղաք, բայձառ քաղաք,
Կորձի քաղաք, քեֆի քաղաք,
Ունիս խելոք, ջադ քաջ դղաք,
Ահը-մահը մեղտի ձգած.
Ջուրով-չորով աշխարհ փռված.
Գեմիներով աբրանք դրանին,
Դեհներով պարի գրպերին
Կորձը գեփե փախըռ-փախըռ,
Ստադը կուկա շախըռ-շախըռ։

Այսպիսի շատ հատվածներ կարելի է բերել։ Ջենովացոց Կաֆան և՛ թաթարաց օրով մեծ դեր խաղաց։

Ճոխացավ կյանքը Ղրիմի և մյուս քաղաքներում, ուր ապրում էին հայերը։ Վատ դրության մեջ չէր և սակավաթիվ հայ գյուղացիությունը³։ Ժողովրդի տնտեսական բարեկեցությունը զարկ տվեց և մշակույթի զարգացմանը։ Թաթարական շրջանում Ղրիմի հայերը ունեցել են ծաղկած գրականություն, բաղմաթիվ բանաստեղծներ և գիտնականներ։ Պրոֆ. Աշոտ Աբրահամյանը մեջ է բերում յոթ տաղերգուների անուններ⁴։

Այդ գրավոր գրականության կողքին զարգացել է և ժողովրդական անգիր բանահյուսությունը, նամանավանդ շախմատի

² Ք. Քուլեբեյան, *Պատմություն գաղթականության Ղրիմու, Վենետիկ, 1895*, էջ 139.

³ Бутков, Материалы для новой истории Кавказа 1722 по 1803, часть II, стр. 47.

⁴ Աշաւ Արտանյան, *Խաչատուր երեց Կաֆայեցու տարեգրությունը*, «Էջմիածին» ամսագիր, 1944, № 1, էջ 39—51.

երգերը և հեքիաթները: Ղրիմում հյուսված ժողովրդական քնարերգությունը իր վրա կրում է թաթարական որոշ ազդեցություն:

Ջենովացիք չկարողացան ազդել հայերի և հույների վրա իրենց կենցաղով: Մինչդեռ թաթարները ամբողջովին արմատախիլ արին հրեաների լեզուն, մոռացնել տվին և հույների իրենց լեզուն, եկեղեցիներում հույն հոգևորականները քարոզները կարդում էին թաթարերեն, որով և կատարվում էին բոլոր գրագրությունները: Ղրիմից Մարիուպոլ գաղթած հույները մինչև օրս էլ խոսում են թաթարերեն: Միմիայն հայերը կարողացան պահել և պահպանել իրենց մայրենի լեզուն, բայց իրենց նիստուկացով նմանապես շատ բան ընդունեցին թաթարներից: Բոլոր թաթարական սովորությունները, շորերը, օրորոցից բռնած մինչև ապրելու տները, հարսանյաց հանդեսները կրում են իրենց վրա Ղրիմի թաթարների կնիքը: Ղրիմի հայոց լեզուն մինչև այժմ նախիջևանում պարունակում է շուրջ 30 տոկոս թաթարական բառեր: Ժողովրդական բանահյուսությունը նույնպես պարունակում է իր մեջ բազմաթիվ թաթարական բառեր: Չնայած այդ ամենին, Ղրիմից բերված ժողովրդական բանահյուսությունը ունի շատ բարձր գեղարվեստական արժեք: Ղրիմից բերված «Հենդեք ինգա» («Սանդուխտի երգը») «Աբրեջանս» և «Հայդանուշ» երգերը անմոռաց երգվում են մինչև այսօր:

ՍԱՆԴՈՒԽԻ ԵՐԳԸ

(Երկու տաբերակով)

1 Հենդեք ինգա,

Սանդու կգա.

Սանդու դարի,

Յանդախիս գվի:

Յանդաս ինձի

Բուլիժ գվից,

Բուլիժը դարի,

Չորանին գվի:

Չորանը ինձի

Խուլի գվից.

Խուլին դարի,

Աղախիս գվի.

Աղաս ինձի

Չալ ծի գվից.

Չալ ծին հեծա,

Ղարասու ելա:

Վեր նայեցա.

Թաթավ կուկար.

Վար նայեցա.

Սեղ գըվազեր:

Քանի մաշդիկ

Քոփուր գըպոնեին,

էրգու ախիգ

Սեիր գանեին.

Մեծին դեսա.

Պարև դվի.

Փոքրին դեսա,

Մայիլ էղա:

Տուռիդ առեկի

Ֆիդանը ըլամ.

Դրաբեզիդ վրայի

Չիշագը ըլամ,

Ինքս առաշդ

Եսիր ըլամ,

Փոքր ախշգանդ

Ջեմը գեր ըլամ:

Հենդեք ինգա, սանդու կգա.

Սանդու դարի, մորքուրիս գվի:

Մորքուրիս ինձի շորաք գվից.

Չորաքը դարի շորանին գվի,

Չորանը ինձի օշխար գվից.

Օշխարը դարի դալիիս գվի.

Դալիս ինձի շալ ծի գվից.

Չալ ծին հեծա, Ղարասու կնաքի.

Ղարասուն թաթավ կուկար,

Թաթավ կուկար, սեղ գըվազեր.

էրգու ախիգ սեիր գանեին,

Մեզը մեծ էր, մեզը ըզդիդ.

Մեծին տեսա, պարև դվի.

Բըզդիդին ալ մայիլ էղա,

Առանց ստապի խայիլ էղա:

ԱԲՐԵՋԱՆԻ ԵՐԳԸ

Արգուն երգում է.

Փարլս առի, շորվախ կնացի,

Դալդըմիշ արի, վերուցի,

Հոքիս, հավաղս, խամբեր,

Արըռջանս գորուցի:

Կամ

Այսօր գանդիս շորվախ կնացի

Դալդըմիշ արի, առի,

5 Այս երգի նոտագրված տարբերակները աե'ն սույն գրքում, Մ. Լյուկենյանի ժողովածուն:

Ձեռքս, էրեսըս լվացի,
Արրոջանս գորուցի,
Հոթիս, հավադս, համբերս
Արրոջանս գորուցի:

Խամբերը պատասխանում է.

Ասոր շորվախ կնացած չիմ,
Ձևորըս-էրեսըս լվացած չիմ,
Աղու գասնը, գրխմիմ,
Արրոջանգ գեսած չիմ,
(Արրոջանգ կղած չիմ):

Արգուն

Աղու ուղենասնը, աղու գրլամ,
Ինձի ուղենասնը, ևս գրլամ,
Համա արրոջանս ալ
Ջևմադ ձոցիդ մեշր բենգ է:

Խամբերը

Արրոջանիդ նշանը ի՞նչ է,
Ասա, ևս քեզի դուգամ,
Արրոջանիդ վրան
Ինչպե՞ս կիւր էր կրած:

Արգուն

Արրոջանիս նշանը
Առարաթը խուլունով է,
Ջևմադ օշխարը խուլիով,
Անունս ալ կրած է:
(Քաղաքը վրան իրոված է,
Ջևմադ օշխարը խուլիով է,
Առարաթը խուլունով է,
Արրոջանիս վրան անունս ալ կրած է):

Խամբերը

Ջուրը գեշթար օլախ-օլախ,
Գրքաշին թուլիս-թուլիս,
Արրոջանի կոնողին
Ի՞նչ ըիդ դաս մուշտուլիս:

Արգուն

Ջուրը դեշթար օլախ-օլախ,
Գրքաշին թուլիս-թուլիս,
Արրոջանս կոնողին,
Արդուն գեշթա մուշտուլիս:

Խամբերը

Աստուգը ինձի մեղք դանին,
Գենճ կլոխս խըյմա դանին,
Էկեր էրգուսըս մեկ լանքնի,
Մեղի ղնդան գրձդին:

Արգուն

Դունին դիրեկը մարջան է,
Հոթիս սիրածը դուն իս,
Էգեր էրգուսիս մեգ ղնդան ձքիննե,
Ջնգանը մեղի արքայութին է:

Խամբերը

Բեգը իմիս դայիս է,
Գրգուած օրենքին խալիլ իմ,
Ալեմ աշխարքին հեգ չիմ փոխիլ,
Արդուն իմիս փալըս է:

Արգուն

Գեդինի վրայն շորս ծիավոր կուկան,
Ջորսին մեգը հաղը մուրաղլը է,
Ես գրջանչնամ համբերին,
Օրթայի թոռու ծիովը համբերն է:

Խամբերը

Ինչ էղիլ է, էղիլ է:
Ջագադս սե գրվիլ է.
Ջագադս սեը գրված էր,
Խամբերին ղուլում էղավ:

«Արրոջանի երգը» ունի իր վարիանտ-
ները. նրանց մեջ տարբերությունը այնքան
չնշին է, որ ավելորդ է մեջ բերելը: Սա ամե-
նատարածված վարիանտն է: «Բեգը իմիս
դայիս է», «Առարաթը» խոսքերը ապացույց
են երգի Ղրիմից բերված լինելուն:

«Հենդեք ինգա» և այս երգը երգում էին
և Ղրիմի թաթարները:

ՀԱՅԿԱՆՈՒՇԻ ԵՐԳԸ

Նոր Նախիջևանի ժողովրդական բանա-
հյուսության ղլուխ-գործոցը կարելի է համա-
րել «Հայկանուշի երգը», որը ժողովրդական
քնարերգության ամենաարժեքավոր գոհարն
է: Այդ երգը իր զգացմունքով լի տողերով,
գեղեցիկ բանաստեղծական համեմատու-
թյուններով, իր անուշ եղանակով ժողովրդի
ամենասիրելի երգն է:

Այն գարեր շարունակ երգվում է, նա
դարձել է անմոռանալի և երբեք չի մոռացվի,
քանի որ գոյություն ունի սիրո և հուզմունքի
զգացումը մարդուս մեջ: «Հայկանուշի երգը»
սիրելի էր և Ղրիմի հայության մեջ, մինչև
վերջս երգվում էր Ղրիմի վարիանտներով:
Առաջին վարիանտը սկսվում էր՝

«Առավոտյան լուսնի նման հոնքերով»
տողով, իսկ երկրորդ վարիանտի առաջին

տողն էր չՍիրո կանթեղ և լուսափայլ աշե-
րով⁵։

Դժբախտաբար այդ վարիանտները մեղ
չհաջողվեց ձեռք բերել։ Այդ վարիանտները
մենք տեսել ենք բանաստեղծ Սիմոն Բաբի-
յանի և նրա եղբոր՝ Վարդանի մոտ, որ հա-
վաքում էր Ղրիմի երգերը։

Նոր Նախիջևանում ևս այդ երգն ունի իր
տարբերակները, որոնք մենք անփոփոխ մեջ
ենք բերում։ Երգի անունը դրել է ժողովուրդը
«Հայկանուշ», որովհետև մի քանի տարբե-
րակներում այդ գեղեցկուհին կրում է Հայ-
կանուշ անունը։

1

Արևելքեն, արևմուտքեն ամբ կուկար,
Քու երեսը մուկ գիշերին լուս գուդար,
Հուսնինդ էր քեզի եգած գիշերս,
Գարմիր-ջերմագ վաշդ բացվիլ էր թուշերդ,
Երեք օրվան լուսնի նման ունքերդ
Ձագեցին սիրդս, գըմեռանիմ մարիգս։

Իմ սիրելի, իմ սիրագան սըրմա մագ,
Ասիմ գերդս աս սահաթին իմանաս,
Գամար ունքդ գանթեղ աշքիդ լուս գուգար,
Նաղ արածդ քաղցր սրգիս ցավ գուգար,
Ձով-ձով աշքիդ քիպրիքները օխի բես,
Ձաղեցին սիրդս, չիմ տիմանալ արի, գես,
Մայիլ էղա ծոցիդ ջիֆթով նուտերուն,
Գրադ լցիր ջահել սրգիս եղերուն,
Նմանեցա ես քու սիրուդ խեբրուն,
Ձբար ինձի ի մեշ մեձ-մեձ սարերուն⁶։

2

Երեք օրվան լուսնի նման ունքերդ,
Խեղք առին սիահ գանթեղ աշքերդ,
Վաշդ բացվիլ է գարմիր, ջերմագ թուշերդ,
Փրնդոնով լըդդա ես քու ընգերդ։

Գամար ունքդ գանթեղ աշքիդ շավղ ղուդա,
(Գամար օնքդ գանթեղ աշքիդ շող ղուդա),
Նալ արածդ քաղցր սրտիս ցավ գուգա,
Ձով-ձով աշքիդ քիփրիքները օխի բես
(Ծով-ծով աշքիդ քիփրիքները օխյայի բես)
Ձաղեցին սիրդս, չիմ դիմանալ, արի դես,
Աայիլ էղա ծոցիդ ջիֆթն նուտերուն,
Գրադ լցիր ջահիլ սրգիս եղերուն

5 Ք. Քալաթյան. Պատմություն գաղթականության
Ղրիմու հայոց, Վենետիկ, 1895, էջ 158։

7 Այս վարիանտը երգվում է Բոփտի գյուղում,
լուսնի տեսնում սոռաթին անգամ։

Ձբեցիր ինձի ի մեշ մեձ-մեձ սարերուն,
Իմ սիրելի, իմ սիրական սըրմա մագ,
Ասիմ գերդս աս սահաթին իմանաս,
Սախն լըլա ասած խոսքիս անիս նաղ,
Անգլիցքի քառեթ նստիս. ինձի կաս⁸։

Այս վարիանտը առաջին անգամ լույս է
տեսել Գեորգ Տիգրանյանի ժողովածուի մեջ,
1892 թվին։

3

Հուսնինգային քովեն էգած գիշերդ
Գարմիր-ջերմագ վաշտ բացվիլ էր թուշերդ,
էրգան բոյով, պարակ մեջքով ֆիդան իս,
Գրիշներուն խելքը թեփեններեն դղանիս,
Գանթեղ աշքերդ լուսնինգային լուս առած,
Ջիլա-չիլա մաղերդ մայրդ ֆըսած,
Գարմիր-ջերմագ խնձորի բես թուշերդ,
Քանդեցին սիրդս, գըմեռանիմ մարիգս,
Ախ Հայգանուշ, վախ Հայդանուշ, սիրագան,
Գըմեռենի չիլա մաղիդ ֆըսվածքին,
Ձով-ձով աշքիդ քիպրիքները օխի բես
Ձագեցին սիրդս գուձու մանա, սոխի բես։

Անցյալ դարի ես Սալան ուխտ կնացի.
Ուխտին տուռը շաղ ման եղա, լըդեսա.
Ուխտին դուռեն ես մենագս եդ եղա,
Մեծ շորվախին ջուրին ջամփան ռաստ եզաւ,
Մեծ շորվախի ջուրը դոնազդ առաձ,
էրգու էրես լուսավորված կուկայիր.
Պարե քեզի, իմ սիրելի Հայդանուշ,
Պարե եգար, իմ սիրելի սիրադան։

Անցյալ դարի երաղումս էդիլ էիր,
Մոգս նստած ռաղմեցիր ու լացիր.
Առավոզյան այիմ-րեյիմ դարթնեցա,
Աչքս լացի, բուլ-բուլ խուշս թռիլ էր⁹։

ՍԵՐԿԵԼԻԻՆ ՁԱՌԻՆ ԴԱԳԸ

Այսօր ես գերվում ղեսնելու
Իմ սիրադանիս.
Սիրադանս, գու համփերիս
Մինչև իմ կալուս,
Թրուշուն ձագերուն հարցնիմ
Իմ նախշուն յարիս,
Մի՞դքդ է, քեզ հեզ մեղդեդ
Բախշան կնացինս։

8 Այս երգի նոտագրված օրինակը տե՛ս սույն գրու-
րում, Մ. Լյուկենյանի ժողովածուն։

9 Այս վարիանտը գրի ենք առել Չալբըր գյուղում։

Սերգեյին ձառին դազը
նստանք ու լացինք:
Թըռչուն ձագերուն հարցնիմ
իմ նախշուն յարիս:
Ռոդոս-զադե դեֆթեր կրից
Չի դեսնված փորձանք,
Թոռցին դեսոքս ձեռքես,
Գրինդոնս՝ ես քեզ:
Թըռչուն ձագերուն հարցնիմ
իմ նախշուն յարիս:

Րացի այս սիրահարական երգերից,
Դրիմից բերված են ևս շատ ուրիշ բուլանդա-
կության երգեր, որոնց միայն բեկորներն են
հասել մեզ: Օրինակ կարող է ծառայել «Գո-
լամի երգը», որի նվազի տակ աղջիկները
սիրում էին: Սրա լրիվ ընդգրկում մեզ տվել
էր Արաբիայի Զամինյանը և մենք ուղարկել
էինք Նյու Լալայանին, որ հրատարակե մեր
հիշված ժողովածուի մեջ: Այժմ մեջ ենք բե-
րում այն, ինչ որ մնացել է մեր հիշողության
մեջ:

Այսօր շաբաթօր է,
Գողամ քաղելու օր է:
Էշթամ, դողամս քաղիմ,
Թալանս հանիմ, չորի տնիմ:
Էշթամ դողամս քաղիմ,
Շեյրեի չուրուլ թուռի տնիմ,
Խըմիլքեն էդև խիստ ղըբաթե,
Հաբիված մսուղուն այնիս դանե:
Գողամիս ձառի բես մորի է,
Հին Խրիմեն էրդու արութ ղողի է:

Այս երգի շարունակությունը չգտանք:

* * *

Ղրիմցի հայ վաճառականները միշտ
սևրտորեն կապված են եղել Թամանի թերա-
կույու հետ և խոշոր առևտրական գործեր են
ունեցել այնտեղ, նամանավանդ ռուսական
իշխանության օրով, Տմուտ արխայում, շե-
նովադոց օրով՝ Մասրիկայում: Թամանի
մասին մեզ հասել են հետևյալ տողերը.

Թամա՛ն, Թամա՛ն, սիրուն Թամա՛ն,
Ամեն պանով ինքդ Թամամ.
Քու առդուդ օսկի օլախ,
Մեշիդ մաշդիկը շեն ու ուրախ:

Մի ժամանակ ամբողջ Հյուսիսային
Կովկասի առևտուրն ընթանում էր Թամանի
վրայով, այդտեղից էին արտահանում նրա
հարուստ հումքը և առատ ցորենը:

* * *

Խանեն կուկա բարաք բեսա,
Հոսեն իլինք օսկին գեշթա.
Շեն գենա եսիր բաղարը,
Նա դըփակե մեր գարարը:

ԵՐԴ ՔԵՖԵՆԻ ՄԱՍԻՆ

Քեֆե քաղաք, լայծառ քաղաք,
Ունես խելոք, շաղ քաջ ղղաք,
Ահը-մահը մեղդի ձգած,
Ճուրով-շորով աշխարհ փոված:
Գեմիներով արբանք գըդանին,
Դեններով պարի ղըպերին:
Կորձը գեփե փախըռ-փախըռ:
Ստագը կուկա շախըռ-շախըռ:
Խոշտ է, գըթափիք բոլ բըրդինք,
Համա չերերդ գըլա իլինք.
Սարայի բես գունեք ղըխոշտիք,
Թաքավորի բես մեշը դարբիք:
Քեֆե քաղաք, Քեֆե քաղաք,
Տուռդ-շեմդ օրհնած քաղաք,
Արբիս, աջիս ու գորանաս.
Մեղի գըռնադ դուն միշտ մնաս:

Այս երգը մեզ տվել է տիկին Շուշանիկ
Խաղիդյանը, նա վերցրել է իր հոր տետ-
րակից, որ երկար տարիներ ապրել է Քե-
ֆեում: Հստ բուլանդակության կարելի է են-
թադրել, որ հորինված և կամ գրված է ար-
տագաղթեցումից առաջ, XVIII դարում: